ՆՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ
Հատոր 2, համար 1, 2008թ.
www.ysmu.am

# ԾԽԵԼՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, 2006

Բազարչյան Ա,Ա[1*], Ուորրեն Չ. Վ[2]., Ջոնս Ն. Ռ[2]., Ասմա Ս[2].

(1) Հայաստան, Երևան, Ազգային առողջապահության ինստիտուտ
(2) ԱՄՆ, Ատլանտա, Ջորջիա, Հիվանդացությունների կանխարգելման և հետազոտման կենտրոնի ծխելու և առողջության գրասենյակ

Ամփոփում

Մեր հետազոտությունները, անցկացրած 2006 թ. Հայաստանում բժշկական ուսումնական հաստատությունների 3-րդ կուրսերի ուսանող-բժիշկների շրջանում համատեղ միջազգային կազմակերպությունների հետ, հաստատեցին, որ նրանց մոտ ծխելու տարածվածության մակարդակը բավականին բարձր է՝ սկսած 28,6 % (ուսանող-ստոմատոլոգ) մինչև 7,2 % (բժշկական ուսումնարան): Հետազոտությունների արդյունքները ցույց տվեցին, որ ուսանող-բժշկի 20 %-ից քիչը ուսուցում ստանում են, որպեսզի հետագայում աջակցեն խնամյալներին՝ դադարեցնելու ծխելը, չնայած նույն այդ ուսանողների 90 %-ը ցանկություն են հայտնում, որպեսզի նման ուսուցումը ներառվի ծրագրերի մեջ: Անցկացված հետազոտությունների արդյունքում ակնհայտ է դառնում, որ միջազգային միջոցառումները, խնամյալների հետ ծխելու հարցով դադարեցման խորհրդատվությունը՝ կապված մշակման, փորձարկման և ներդրված ուսումնական ծրագրերում, պետք է իրականացվի ՀՀ ԱՆ և ԳԿ նախարարությունների համատեղ ուժերով:

*Հանգուցային բառեր.* ծխում, տարածվածություն, ուսանողներ, ուսումնական ծրագրեր, խորհրդատվություն, օգնություն: